ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-04

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 4 նիստի

26-ը նոյեմբերի 2025թ.

ԱԺ 414 սենյակ, ժ.10:00

Ս.թ. Նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի Հարցազրույցի փուլի անցկացում,
2. Մրցույթի արդյունքների ամփոփում, մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուի ընտրություն, որոշման ներկայացում ԱԺ նախագահին:

Խորհրդի բոլոր հինգ անդամները մասնակցում էին նիստին: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Օրակարգի 1-ին հարց	Ա. Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի Հարցազրույցի փուլի անցկացման կանոնները: Ժամը 10:00-ին սկսվեց հավակնորդների հարցազրույցի փուլը՝ հետևյալ հաջորդականությամբ՝ Կարեն Հակոբյան - ժ. 10:00 , զեկուցող՝ Հարութ Ակլունց Վահե Մկրտչյան - ժ. 11:30 , զեկուցող՝ Արուս Հայրապետյան:
Օրակարգի 2-րդ հարց	Խորհուրդը ամփոփելով արդյունքները որոշեց հաղթողին և առաջարկեց խորհրդի անդամ Արուսյակ Ջուլհակյանին Խորհրդի որոշումը ներկայացնել Ազգային ժողովի նախագահին:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը որոշեց մրցույթի հաղթող ճանաչել Վահե Մկրտչյանին, ինչպես նաև որոշեց հանձնարարել Արուսյակ Ջուլհակյանին՝*

	թեկնածու ընտրելու մասին Խորհրդի որոշումը ներկայացնել Ազգային ժողովի նախագահին։

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյան